ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 31-ը հունվար 2018թ.
Ժամը 12^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Տ. Բաղդասարյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Տ. Բաղդասարյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Կարագ սերուցքային» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Էլիտ Ֆուդ» ՍՊԸ
2	<<Արմեն-Համիկ եղբայրներ>> ՀՁ ՍՊԸ
3	<<Արամ-Գ>> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:.

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրչավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի,
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտում առակա է եղել անհամապատասխանություն մասնավորապես.
-«Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագրով «Էլայզեր» ՍՊԸ հետ, որտեղ գործընկեր-2-ը՝ «Էլայզեր» ՍՊԸ, պետք է ապահովի «մասնագիտական փորձառություն», «տեխնիկական միջոցներ», «ֆինանսական միջոցներ» և «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշները: Սակայն 06.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ Է. Սարգսյանին ուղղված գրությունում «Էլայզեր»

ՍՊԸ տեղեկացրել է, որ իրեն պատկանող տեխնիկական միջոցները գտնվում են սահմանափակման մեջ: Ուստի /կոնսորցիումի/ պայմանագրով սահմանված գործընկեր-2-ի «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի ապահովումը անիրատեսական է: Ինչպես նաև առակա է գնահատող հանձաժողովի պատասխանատուի զեկուցագիր պատվիրատուի ղեկավարին (կցվում է):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով /12.02.2018թ./ կասեցրել է հայտերի գնահատման նիստը:

15.02.2018թ. «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանություն ուստի գնահատող հանձնաժողովը մերժել «Էլիտ ֆուդ» ՍՊԸ-ի հայտը:

Գնահատող հանձնաժողովը մերժել է <<Արմեն-Համիկ Եղբայրներ>> ՀՁ ՍՊԸ-ի հայտ քանի որ հայտով ներկայացված հայտի ապահովումը բանկային երաշխիքի ձևով չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ վավերականության ժամկետը չի սահմանված 90 աշխատանքային օր:

<<Արամ-Գ>> ՍՊԸ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Տ. Բաղդասարյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել <<Արամ-Գ>> ՍՊԸ.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Պլանավորված նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանում	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	կարագ, սերուցքային (Կարագ)	կգ	185831	625 692 977	<<Արամ-Գ>> ՍՊԸ	461790035	554148042			

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը գանահատող հանձնաժողովը 19.02.2018թ բանակցություններ վարեց <<Արամ-Գ>> ՍՊԸ-ի հետ: Բանակացության ընթացքում ընկերության տնօրենը հայտով ներկայացված գնային առաջարկը նվազեցրեց և սահմանեց 546 343 140 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Տ Բաղդասարյան)

4.1 **26.02.2018թ.** «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվեց <<Արամ-Գ>> ՍՊԸ –ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Տ. Բաղդասարյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Տ. Բաղդասարյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/11» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Տ. Բաղդասարյան